

Մեր հյուրն է բանաստեղծուհի, գրականագետ Նաիրա Համբարձումյանը: Նրա «Ես բառ եմ դարձել» ժողովածուի բանաստեղծությունների տողերից էլ ծնվել են նրան ուղղված հարցերը:

- Ի՞նչ է լինում, «Երբ դատարկվում են հայելիները»:
- Մենության տրտմությունն ավելի է մզանում:

- Ինչո՞ւ «չեն խանգարում իրար ծյունն ու կրակը»:
- Նրանցից յուրաքանչյուրն իր ճակատագիրն ու ճանապարհն ունի:

- «Երկնքի արքայության ուղեգիր ո՞վ պիտի տա»:
- Մենք՝ մեզ:

- Ո՞րն է այն «լուսամուտը», որ բավական է «մենության փոքրիկ ձեռքերը խաչելու» կամ «արև ունենալու համար»:
- Սերը:

- Ինչո՞ւ է պետք սիրել:
- Ամբողջանալու համար:

- Ինչո՞ւ «չխորհել՝ ինչպես են ապրում ծաղիկները»:
- Նրանք մարդկանց նման են:

- «Իմ բախտը բերել է, Ես մարդ եմ ծնվել»...
- Որովհետև մարդ էլ կա, մարդ՝ էլ:

- «Սերը կորցնել Ու հետո գտնել» Հնարավոր չէ՞:
- Հնարավոր չէ:

- Հանդուգն չէ՞ «Կյանքը Այն տողն է, Որ հիմա գրում եմ»:
- Ո՛չ, որովհետև գրում եմ կյանքից, որովհետև տողս շնչում է, հետևապես՝ ապրում:

- Բանաստեղծությունն է, «Որ տանելու է մեզ Սկիզբը դեպի»:
- Բանաստեղծությունն է՝ բանաստեղծությունից դուրս:

- Ե՞րբ «առավոտ բառի մեջ Նորից արև կլինի»:
- Երբ արդարության մասին միջոց նորից ապրի:

- «Լսո՞ւմ» եք «արդյոք ոտնաձայնը լռության»:
- Լռությունը լսել և հասկանալ ընտրյալներին է տրված միայն:

- Ո՞րն է «խուան Սիրոյի «Երազների գույնը»»:
- Կապույտը, բայց մաքուր կապույտը:

- «Լույսի ու ձյունի խառնուրդը» հաստատ սերն է:
- Այո՛, քանզի այդ խառնուրդից են ծնվում աշխարհի բոլոր մանուկները:

- Ինչո՞ւ վերջակետ չեք սիրում...
- Որովհետև մենք անկախ ենք մեր ապրելու ժամանակից, այն մենք չենք որոշում:

- «Երբ քեզ չեն դիմավորում, Պեռ չի նշանակում, որ դու չես եկել»:
- Բացարձակ ճշմարտություն է, քանի որ հարաբերական է՝ նա, ով «եկել է», արդյո՞ք եկել է... Ամեն ինչ ժամանակի ուսերին է:

- Ժամանակը բուժո՞ւմ է «բոլոր բաց վերքերը»:
- Բուժում է, ուղղակի պետք է կարողանալ ազատվել ոչ միայն վերքերից, այլև սպիներից:

- «Այս բեմում խաղալուց հոգնել եմ». ո՞ւր եք ցանկանում վերադառնալ:
- Ոչ թե վերադառնալ, այլ նորից սկսել:

- «Երբ հոգիդ մանուշակագույն էիր ներկում, Ի՞նչ էիր կարծում, մանուշակի հոգի՞ ունես...».
- ն՞ում են ուղղված այս խոսքերը:
- Երկերես, յոթնաստառ և հարափոփոխ տրամադրություններով մարդկանց, որոնց ոչինչ չպետք է վստահել:

- Ձեզանից հետո հաստատ ոչինչ չի փոխվի:
- Կփոխվի, իհարկե՛ ես չեմ լինի, բայց դա գոյության նորմալ ընթացք է:

- «...երազը Տաճար է տանում Նույնիսկ անհավատներին...»:
- Այո, քանզի երազանքները իրականանում են միայն հավատով... Ես հավատում եմ նաև հրաշքներին:

- Փորձում եք «ապրել աղոթքի նմա՞ն»:
- Աղոթքի պես՝ անընդհատ մաքրվելով:

- «Թեթև սահանքները կյանքի» այդ ինչպե՞ս եք բացում:
- Սահանքները կան, ուղղակի պետք է դրանք բացահայտել կարողանալ:

- «Ես ապրելու ճանապարհ եմ փնտրում այնտեղ, Ուր չկա ոչ մի ճանապարհ»:
- Կյանքն է այդ:

- Կարո՞ղ է հայացքը «տաք» լինել այնքան ու «հասկանալի»:
- Եվ միանգամի ց հասկանալի:

- «Պետք է փնտրել ձևն ապրելու»:
- Ամեն վայրկյանը, ամեն ժամը, ամեն օրը որոնում է, և ապրելու ձևը փնտրելը՝ որոնման ծես:

- Թուղթը «արժանապատվության զգացո՞ւմ» ունի:
- Պետք է հարգել թուղթը, որի վրա գրում ես: Այն արժանապատիվ է՝ գրածիդ հանգույն:

- Այդ ե՞րբ է, որ «գորտերը բանաստեղծում են»:
- Երբ բանաստեղծությունը չի ընկալվում:

- Բոլոր «նորածին զգացումների՞ն» է «անհապաղ խնամք հարկավոր»:
- Այո, ինչպես բույսը, երբ նոր ես աճեցնում:

- «Ինչպե՞ս է մեկնաբանվում ճախրը»:
- Արևի ցեղակցության հրկիզումով:

- «Որքա՞ն է ժայռի քնքշության չափը՝ Նրա հոգում ծնված ծաղկի նկատմամբ»:
- Իր խրոխտության չափով:

- «Եթե մենակ ես՝ Ոչի՞նչ ես ուրեմն»:
- Մեկը ոչնչի հանրագումարն է:

- «Ինձ հասկանալն էլ դժվար է...»: Ինչո՞ւ է դժվար:
- Որովհետև ճանապարհը, որով գնում եմ, դուրս է ինձանից:

- Ինչո՞ւ եք լուսին սիրում:
- Լուսինը միշտ խորհել է տալիս:

- Ինչպե՞ս եք «հրաշեկ արևից ապագա սարքելու»:
- Արևը կյանք է, կյանքը՝ ինչ-որ բան ստեղծել-թողնելու հնարավորություն:

- Դուք բա՞ռ եք դարձել: Ո՞րն է «բառի» բանալին:
- Ի սկզբանե էր ԲԱՆՆ...

Հարցազրույցը՝ Հայկուշ Շահբազյանի